

8908



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

« 13 » 08 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 161 - 24

Նախաձեռնող՝

«Նորք շին» ՍՊԸ  
Երևան, Կորյունի փ. 23

Գործունեությունը՝

Երևան, Կենտրոն վարչական շրջան, Եկմայան փողոց  
նրբանցք 16 հասցեում բազմաբնակարան բնակելի  
համալիրի կառուցում  
Երևան, Կենտրոն վարչական շրջան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 161 - 24

«13» օգոստոսի 2024 թ.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Եկմայան փողոցի նրբանցք 16 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝

«ՆՈՐՔ ՇԻՆ» ՍՊԸ

Փաստաթղթերի փաթեթ՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գտնվելու վայրը՝

Երևան, Կենտրոն վարչական շրջան

**Ներածական մաս.** «Նորք շին» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքի Եկմայան փողոցի 16 նրբանցք հասցեում նախատեսվում է բազմաբնակարան բնակելի համալիրի (այսուհետ՝ Համալիր) կառուցում: Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Համալիրի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 0,18676 հա մակերես: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Համալիրի նախագիծը մշակվել է Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 2022 թվականի ապրիլի 13-ի 01/18-07/2-20131-266 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

**Նկարագրական մաս.** Համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Երևանի Կենտրոն վարչական շրջանի Եկմայան փողոցի նրբանցք 16 հասցեում, որի հարևանությամբ գտնվում են բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքեր: Տարածքն ունի հարթ ռելիեֆ, ծանրաբեռնված է կառույցներով, որոնք ենթակա են քանդման՝ համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Համալիրը բաղկացած է լինելու 2 մասնաշենքից՝ 11 և 17 հարկանի, որոնք ունենալու են հարթ տանիքներ: Մասնաշենքերը իրար են կապվելու ստորգետնյա հարկերում, ինչպես նաև 3-րդ հարկում: Բնակարանների ընդհանուր քանակը 110 է: Ստորգետնյա հարկերը նախատեսված են որպես ավտոկայանատեղի: Ստորգետնյա ավտոկայանատեղին նախատեսված է 100 մեքենայի համար: Համալիրն ապահովված է լինելու վերելակներով, տարհանման աստիճաններով և ելքերով, աստիճանավանդակներն առանձնացված են լինելու միջանցքներից հակահրդեհային ինքնափակվող դռներով: Համալիրում նախատեսվում է հակահրդեհային համակարգ և էներգախնայողությանն ուղղված մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար



բարձր արդյունավետությամբ ջերմամեկուսիչների կիրառում, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, օդատարների ջերմամեկուսացում բարձր արդյունավետությամբ ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով, օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

Կառուցապատման մակերեսը հողամասում կազմելու է 747,04 մ<sup>2</sup>, կանաչապատման մակերեսը՝ 750,78 մ<sup>2</sup>, անջրանցիկ տարածքներինը՝ 369,78 մ<sup>2</sup>: Կառուցապատվող տարածքում առկա է ծառաթփային բուսականություն, որը պահպանվելու է, շինարարության ընթացքում հատումներ չեն իրականացվելու:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված տարածքի բարեկարգման և արդիականացման նախագծի համաձայն և Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ տարածքի բնակլիմայական պայմաններին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: Կանաչապատման համար օգտագործվելու են թխկի սրտատերև կարմիր՝ 35 հատ, գնդաձև իլենի՝ 15 հատ, գնդաձև թույա՝ 20 հատ, բարբարիս՝ 6 հատ, ասպիրակ՝ 10 հատ, ֆորզիցիա՝ 8 հատ, խենոմելիս՝ 15 հատ, սամշիտ՝ 56 գծմ, եղևնի կովկասյան՝ 10 հատ, թզուկ վարդեր, սիզամարգ:

Ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Գազամատակարարումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Համաձայն հայտում ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Շինարարության տևողությունը կազմելու է 60 ամիս, որի ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Քանդման աշխատանքներն իրականացվելու են քանդման թույլտվություն ստանալուց հետո՝ թույլտվությունում նշված եղանակով, առանց պայթեցման աշխատանքների՝ բնապահպանական բոլոր մեղմացնող միջոցառումների կիրառմամբ, որոնք ներկայացված են հայտի նկարագրական մասում և բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարության ընթացքում իրականացվող աշխատանքների արդյունքում օդային ավազանի և ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար նախատեսվել են անհրաժեշտ միջոցառումներ: Շինարարության ընթացքում շինարարական հրապարակը ցանկապատվելու է, շենքերը և շինությունները ծածկվելու են շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվացվելու են հատուկ հարթակների վրա, ավազ, ցեմենտ, գաջ, խիճ, այլ սորուն նյութեր, հողային զանգվածներ, շինարարական աղբ տեղափոխող տրանսպորտային միջոցները ծածկվելու են փոշու համար անթափանց ծածկոցներով, օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար իրականացվելու է շինհրապարակի ջրցան՝ բացառելով կեղտաջրերի արտահոսքը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:



Օգտագործվելու են փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումներ, հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործվելու են փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, շինարարական նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորվելու են փակ տարածքներում կամ ծածկվելու են անթափանց թաղանթներով, շինարարական աղբը տեղափոխվելու է դրա համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, իրականացվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում: Շինարարության ողջ ընթացքում շինարարական հրապարակի տարածքում տեղադրվելու են օդի որակի մոնիթորինգի սարքավորումներ՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից ստուգաչափման հնարավորությամբ:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնը մատակարարվելու է պատրաստի վիճակում բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված բետոնատար ավտոմեքենաներով:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու-կենցաղային նպատակների համար: Անհրաժեշտ ջրաքանակը շինարարական հրապարակ է բերվելու ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում տեղադրվելու են ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո ապամոնտաժվելու են:

Աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով բոլոր շահագործվող մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով, իսկ երեկոյան ժամերին բացառվելու է աշխատանքների իրականացումը:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով բացառվելու է շինանյութերի տեղադրումը հողային ծածկույթի վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Աշխատանքների ավարտին տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ և գրունտի մնացորդ, քանդման թափոններ) տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված համապատասխան վայրեր:

Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները նախապես որոշված կլինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու նպատակով նախատեսված են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. մթնոլորտային արտանետումների (փոշի, ծխագազեր) և աղմուկի մակարդակի մշտադիտարկում՝ պարբերաբար և ըստ անհրաժեշտության,

2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ պարբերաբար,



3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,

4. հողի որակի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ:

**Պատճառաբանական մաս.** Հանրային առաջին քննարկումից հետո Երևանի քաղաքապետարանի կողմից տրվել է համաձայնություն նախատեսվող գործունեության իրականացման համար և առաջարկություն է ներկայացվել աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 426 որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների կատարմամբ, ապահովել էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումները և կանաչապատման մակերեսը՝ 40 տոկոս, շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինհրապարակը ցանկապատել և այլն, որոնք հետագայում ներառվել են հայտում և հաշվի են առնվել եզրակացությունը կազմելիս:

Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր համայնքում (Կենտրոն վարչական շրջան) անցկացվել է երկրորդ հանրային քննարկումը, որի ընթացքում բնակիչները հիմնականում կողմ են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ նշելով կառուցապատման կարևորությունը տարածքի բարեկարգման և խաղահրապարակ կառուցելու տեսանկյունից: Հանրային քննարկման ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվել է շինարարության ընթացքում առաջնորդվել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ սահմանված պահանջներով (շինհրապարակում օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրում՝ առցանց հարթակի հասանելիությամբ, շինհրապարակի ցանկապատում և այլն), ինչն ընդունվել է նախաձեռնողի կողմից և համապատասխան միջոցառումները ներառվել են հայտում:

Նախաձեռնողը պարտավորվել է նախագծի իրականացման արդյունքում ստեղծել բարենպաստ միջավայր բնակիչների համար, իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Փորձաքննության գործընթացում՝ երկրորդ հանրային քննարկումից հետո, կարծիք է ստացվել նաև Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից՝ որում նշվել է, որ նախատեսվող գործունեությունը համարվում է ոչ նպատակահարմար, քանի որ Ղազար Փարպեցու փողոցի բեռնաթափման նպատակով մշակվում է նոր բարեկարգման ծրագիր՝ որով նախատեսվում է իրականացնել հետիոտն մայթի լայնացում և երթևեկելի հատվածի նեղացում: Հայտի և նշված բարեկարգման ծրագրի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով հայտն ուղարկվել է կարծիքի «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին, ինչին ի պատասխան նշվել է, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից մշակված գլխավոր հատակագծով Եկմայան փողոցի նրբանցք 16 հասցե հատվածում փոփոխություններ նախատեսված չեն, իսկ Ղազար Փարպեցու փողոցի համար բարեկարգման ծրագրի վերաբերյալ ընկերությունում տեղեկատվություն առկա չէ:

Նախաձեռնողը պարտավորվել է նաև շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ (ներառյալ՝ ջրցանման համար նախատեսված թնդանոթ սարքավորումը, մթնոլորտային օդի չափիչ սարքավորումները, շրջակա



միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումներ ոչ միայն ժամանակացույցով, այլ նաև ըստ անհրաժեշտության, և այլն):

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Զրոգտագործումն ու ջրահեռացումն իրականացվելու են պայմանագրային հիմունքներով՝ տեխնիկական պայմաններին համապատասխան:

Հողային ծածկույթի վրա լրացուցիչ ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ տարածքը կառուցապատված է, և հողաբուսաշերտը գրեթե բացակայում է:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական գործընթացում հայտի վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել հայտը լրամշակելիս և եզրակացությունը կազմելիս:

### **Փորձաքննական պահանջներ**

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինադրի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն),

2. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և խնամքով: Կանաչապատումն իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներով և ապահովել նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը՝ 40 տոկոս և ավելի, շինարարության ընթացքում բացառել ծառահատումները,

3. ապահովել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ սահմանված պահանջների կատարումը (օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրում, հարակից տարածքների ծառաթփային բուսականության խնամք և այլն),

4. տրանսպորտային միջոցների ելումուտը շինհրապարակ իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված երթերի քանակով և ժամանակացույցով,



5. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները),

6. քանդման և շինարարության ընթացքում ապահովել աղմուկի մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, երեկոյան ու գիշերային ժամերին դադարեցնել աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը,

7. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը քանդման և շինարարության փուլերում (օդի որակ, հողային և ջրային ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն):

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Նորք շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Եկմայան փողոցի նրբանցք 16 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան